ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2017 թվականի N 40

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջներով, համաձայն Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի մայիսի 11-ի N 27 որոշման և Հասմիկ Վարդանյանի դիմումի՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 1 փողոց N 14 հասցում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.095 հա հողամասի ընդլայնման համար ուղղակի վաճառքով Հասմիկ Աշոտի Վարդանյանին օտարվող 1-ին փողոց N 14/1 հասցեում գտնվող համայնքային սեփականության 0004-0035 ծածկագրի 0.03547 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր:
2. Հասմիկ Վարդանյանին՝ հողամասի կադաստրային գնի չափով՝ 440540 /չորս հարյուր քառասուն հազար հինգ հարյուր քառասուն/ ՀՀ դրամ գումար վճարել համայնքի բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 22

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2017 թվականի N 41

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Հասմիկ Աշոտի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 0004-0013 ծածկագրի (վկայական N 30032016-07-0075, 0.095 հա) և 0004-0035 ծածկագրի 0.03547 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել միասնական 1-ին փողոց N 14 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 թ. մայիսի 22

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2017 թվականի N 42

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի, Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 53-Ն որոշման, ինչպես նաև համայնքի սոցիալական հարցերի հանձնաժողովի՝ 2011 թ. փետրվարի 14-ի N 1 արձանագրության պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 4726՝ հուղարկավորության նպաստներ, հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ հատկացնել Հերիք Խաչատուրի Երիմյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. մայիսի 25

գ. Նոր Արտամետ